

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Լոռու մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության 2016թ.

### աշխատանքային տարվա

2016թ. ընթացքում Լոռու մարզպետարանում մուտք է արվել մոտ **18725 /2015թ.- 16920/** գործ (պաշտոնական և ոչ պաշտոնական գրություններ, հանձնարարականներ, դիմումներ, հարցումներ, բողոքներ և այլն), ընթացք տրված կամ առաքված գործերի քանակը կազմում է ավելի քան **6700 /2015թ.- 6600/**:

Հաշվետու ժամանակաշրջանում Mulberri համակարգ է մուտքագրվել **4671** պաշտոնական գրություն/**2015թ- 4320/**, որից **1077** -ը՝ հսկողական գրություններ են/**2015թ- 1290/**, դրանց կատարման վերահսկողությունը իրականացվել է ապարատաձրագրային և էլեկտրոնային եղանակներով: Դրանցից **1031** հանձնարարականի /**2015թ.-1205/** պատասխանվել է սահմանված կարգով և ժամկետներում, մնացած հանձնարարականների կատարումը ընթացքի մեջ է և վերահսկվում է մեր կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում առցանց համակարգով և առձեռն եղանակով մարզպետարան է մուտք եղել **3549** դիմում, բողոք, առաջարկություն, տեղեկատվական հարցում /**2015թ.- 2600/**, որոնցից **266 /2015թ.- 173/-**ը ստացվել են Նախագահի աշխատակազմից, Ազգային ժողովից, ՀՀ Կառավարությունից, ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից: Դրանք բոլորը վերցվել են հսկողության, դիմումներին տրվել են համապատասխան ընթացք, ժամկետների ուշացումներ չեն արձանագրվել:

Քաղաքացիների ընդունելության կարգի պահանջների համաձայն, հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է ՀՀ Լոռու մարզպետի մոտ ընդունելության գրանցվողների հետ նախնական ընդունելություն /թվով մոտ **975** քաղաքացի /**2015թ. - 753/** /, որոնց պարզաբանվել և մեթոդական ու իրավախորհրդատվական աջակցություն է ցուցաբերվել, բացատրվել է նրանց իրավունքները, ուղղորդվել ըստ դիմումի բովանդակության, տարբեր մարմիններ ու գերատեսչություններ: Նշված քաղաքացիներից թվով **361 / 2015թ.- 252 /-ը** գրանցվել են մարզպետի մոտ ընդունելության, նրանց բարձրացրած հարցերին տրվել են համապատասխան պարզաբանումներ և ցուցաբերվել համապատասխան աջակցություններ և օժանդակություն:

2016թ-ի ընթացքում Լոռու մարզպետարան տարբեր եղանակներով / Mulberri համակարգ, առձեռն, էլեկտրոնային փոստ/ մարզային ենթակայության ձեռնարկություններից, հանրապետական գործադիր մարմինների տարածքային

ստորաբաժանումներից, անհատ ձեռներեցներից, հասարակական և այլ կազմակերպություններից, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններից մուտքագրվել է **10504** գրություն/**2015թ.- 10000/**, որոնց տրվել է համապատասխան ընթացք:

2016թ. ընթացքում իրականացվել է Լոռու մարզպետի մոտ կայացած թվով **31 /2015թ.- 28/** խորհրդակցությունների, ինչպես նաև Լոռու մարզի խորհրդի թվով **4 /2015թ.- 4/** նիստերի արձանագրում, հանձնարարականների առաքում ըստ հասցեատերերի, տրված հանձնարարականների կատարման նկատմամբ վերահսկողություն:

Քարտուղարության պետ Սամվել Մակարյան